


Ամենայն թղթակցութիւնք
և վճարումներ պարտին ուղ-
ղուիլ առ խմբագրութիւնն
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
(Ամէն երկրի համար)
Տարեկան 2 թաւէն
Մէկ թիւը 10 էնթ



All communications and sub-
scriptions to be addressed to
DR. M. S. GABRIEL,
EDITOR OF THE "HAYK"
An Armenian fortnightly
Political and Hygienic
202 W. 23rd St., New York.
TERMS TO SUBSCRIBERS.
For all countries, One year \$2.00
Single copy \$0.10

ԿԻՍԱՄԱՆԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ և ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Editor—M. S. GABRIEL, M. D.

Տէր-Խմբագիր—Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

202 W. 23rd St., New York City, U. S. America.

Ա. ՏԱՐԻ

ՆՈՒԱԶՄՈՒՆԻՔ ՓԵՏՐՎԱՐ 1 1891

ԹԻԻ 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օսմանեան Պետութիւնն եւ Սուլթան Համիտ. — Հայ
Ազգին ապագայն. — Դրամք Հայոց Թագաւորաց Կիլիկիոյ
Նամակ ի Գեր. Հ. Ղ. Վ. Ալիշանէ. — ՀԱՅՔ. — Նամակ
Կ. Պօլսէ. — Նոր հարստահարութիւնք. — Այցելութիւն ի
Փրովիտէն. — Մարշ Արարատեան. — Նամակ Փրովիտէն
— Հայոց համար արուեստանոց. — Բաղրամ ալլ եւ ալլ
Թերթերէ. — ՀԱՅՔ առ Արմէնիա. — Ս. Փրկիչ եկեղեցի
յուսմըր:

Entered as second class matter at the New York, N. Y., Post
Office, Dec. 15th 1890.

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ Բ.

Ա.

Օսմանեան Պետութիւնն իւր աշխարհակալական շը-
ջանն շատոնց աւարտած է և իւր քաղաքակրթական կամ
ներքին շինութեան շըջանն բնաւ սկսած է. Մօնղէս-
քիէօի այն սկզբունքն թէ մեծ տէրութիւնք ներքին ա-
պականութենէ կը կործանին իսկ փոքր տէրութիւնք ար-
տաքին յարձակումէ, ինքզինք լիովին կ'ապացուցանէ
Օսմանեան Կայսրութեան վերայ, որ միանգամայն մեծ է
և փոքր, մեծ է իրրեւ տարածութիւն և փոքր է իրր Պե-
տութիւն մի որ կանգուն կը կենայ յատուկ թոյլտու-
թեամբ հզօրագոյն դրացեացն. Այս պետութիւնն ներ-
քին ապականութեամբ տկարացած լինելով արտաքին
յարձակմանց չկրցաւ դէմ դնել և սկսաւ իւր հոգեր մասն
առ մասն կորուսանել. Շատ չահեկան է բաղդատել այս
պետութեան աճմանց և նուազմանց թուականներն որ-
պէս նշանակուած են անգլիացի հեղինակէ մի:

ԱՅՄՈՒՆԻՔ

Օսմանեան Պետութիւնն հիմնարկեալ ի փոքր Ասիա. 1290

Մօրիա առնուեցաւ	1546
Թրակի և Անդրիանուպօլիս	1561
Պուլկարիա	1596
Մակեդոնիա	1450
Կ. Պօլիս	1453
Մոլտավիա	1458
Սերվիա	1459

Հիւս Թունաստան

Վալաքիա	1460
Պեսարապիա	1465
Խրիս	1481
Սիրիա	1475
Եգիպտոս	1515
Արարիա	1516
Պուլկարիա	1518-59
Կիպրոս	1521
Թունուզ	1571
Պալատա	1575
	1638

ՆՈՒԱԶՄՈՒՆԻՔ

Պեսարապիա Օսմանցիներուն ձեռքէն կ'առնուի	1770
Խրիս	1784
Մոլտավիա (ըստ մասին)	1812
Վալաքիա և Մոլտավիա	1830
Սերվիա	1865
Պուլկարիա	1867
Պուլկարիա, Պոսնիա Հէրսէկովին	1878
Կարս, Պաթուս և Կիպրոս	1978
Թունուզ	1880
Թեսսալիա	1881
Եգիպտոս	1882
Արեւելեան Րումէլի	1886

Նուազմանց վերի ցանկն ինքնին բաւական է ցուցնե-
լու թէ Օսմանեան պետութիւնն շատոնց քաղաքած է
հզօր և ահաւոր լինելէ օտարաց, եւ թէ շատոնց սկսած
է իւր անկման զարթոյթիւն դէպի վար սահիլ. Ռուսիա
զարնելով կը յափշտակէ կողմեր, Անգլիա փայփայելով
կ'ընդունի մասեր Օսմանեան հողէն, և ամէն մեծ պե-
տութիւն հնար կը գտնէ իւր բաժին հանելու. Ըստ
որում պաշտպանելու դիրք բռնող Անգլիան Կիպրոսին
և Եգիպտոսին տէր դարցած է առանց կաթիլ մ'արիւն
թափելու Օսմանցոց համար. մինչդեռ ահագին պատե-
րազմ մղող Ռուսիան Պաթուս և Կարս միայն չահած է,
միւս մեծ պետութիւնք փայփայելով առնուեցն աւելի
դիւրին և աւելի աժան կը գտնեն, և Ֆուսսուկան Կառա-
վարութեան պաշտօնական թերթն, Թան, ծովակալ
Տիւրքուէի Կ. Պօլիս այցելութեան առթիւ շողորթիւ-

Թեան մէջ յառաջ գնաց մինչև ըսել թէ « Սուլթանն իւր հպատակաց հաւատարմական սէրն և Եւրոպայի յարգալից վստահութիւնն վաստակիլ գիտցած է : » Այս խօսքեր կը լսուին այնպիսի խմբագրութեան մի կողմանէ որ քաջ գիտէ թէ Մուսայի կեղծ դատաստանն և անսպարտ արձակումն բոլոր Եւրոպան գայթակղեցուցած է Սուլթանի արդարասիրութեան մասին . և թէ Բ. Դրան յետադիմական և կատաղի քաղաքականութիւնն Հայոց վերաբերութեամբ իտրապէս սարսափ է խաղաղասէր և տիրասէր Հայ ազգին սիրալիր վստահութիւնն իւր տիրողաց վերայ :

Օտար տէրութեանց և դիւանագիտութեան այսպիսի ընթացքն կը ցուցնէ թէ անաչառ և իմաստուն խրատ տալէ օգուտ չեն ակնկալեր և թէ Օսմանեան Պետութիւնն անխուսափելի քայքայման դատապարտուած կը համարին : Սակայն Սուլթանի հառաւարութիւնն կրնայ խաբուիլ Եւրոպացւոց չղոցորթութենէն և կարծել թէ արդարեւ փրկուէտ ուղղութեան մէջ կը գտնուի մինչ յանգիւտ կորուստ կը դիմէ :

Մեք անձնապէս թշնամի չեմք մարդկային ազգին ո եւ է ցեղին կամ ճիւղին , և թուրքին ալ թշնամի լինելէ հեռի եմք : Մեր անկեղծ կարծիք այն է սակայն թէ Օսմանեան դիւանագէտք ծանր սխալներով և թիւր հասկացողութեանց տակ կը գործեն : « Օսմանեան դիւանագէտք » ըսելու փոխան պարտէինք ըսել Սուլթան Ապտուլ-Համիտ Կայսրն ինքն , զի նա իւր ձեռաց մէջ կեդրոնացուցած է իւր երկրին բովանդակ վարչութիւնն : Թէ ինչ են Սուլթանի քաղաքականութեան սխալներն , ըստ մեր խոնարհ կարծեաց , և թէ ինչպէս կրնայ Օսմ. Պետութիւնն փրկուիլ , բարեկամական ոգւով պիտի քննեմք յառաջիկայ թուով :

ՀԱՅ ԱԶԳԻՆ ԱՊԱԳԱՅՆ

(Շարունակութիւն , տես Թիւ 1 :

Դիտողութիւնն ցուցած է թէ երբ անհատ մի հարստութիւն ձեռք բերելու համար մտաւորական կարողութիւններն չափաքանց կը յոգնեցունէ , իւր սերունդ կամ Ֆրիդրիխայէս կամ իմացականապէս տկար կը լինի : Նաև դիտուած է թէ — մասնաւորապէս Հ. Սթենսէրէ — երբ չափաքանց զարգացում կ'առնու ուղեղն ի պատանեկան հասակի , սեռական հասունութիւնն ուշ տեղի կ'ունենայ , և իմացական անչափ գործունէութեան անձնատուր եղողներն սերունդ արտադրելու կարողութենէն զուրկ կը գտնուին յաճախ : Ուրեմն զարմանք չէ եթէ կը տեսնենք թէ մեծ մտաւորական ճգամբք ձեռք բերուած հարստութիւնն երկրորդ կամ երրորդ սերնդեան հապիւ կը հասնի , և ընտանիքն նորէն աղքատութեան մէջ կ'ընկնայ : Ոչ ալ զարմանալի է որ Տեքարդի . Նիւթընի , Շէյքսպիրի նման մեծ հանճարներ իրենց արժանաւոր սերունդ չեն թողուր : Իմացականութեան այն բարձրագոյն վիճակն որ հանճար կը կոչուի , է քան զամենայն նիւազ ժառանգելի վիճակ , մինչդեռ զգացական և բարոյական հանգամանք օոփորտարար ժառանգութեամբ կը փոխանցին յաջորդ սերնդեան :

Քաղաքակրթութեան վերի աստիճանաց հասած ազգի մի զօրութիւններն այսպէս կը գործածուին իմացական ձեւի տակ մեծ քանակութեամբ , և սպառման մեծագոյն կեդրոնն ընդհանրապէս երկրին մայրաքաղաքն է : Մայրաքաղաքն երկրին ուղեղն է : Մայրաքաղաքաց նշանաւոր ընտանիքներն մէկ կամ երկու դար հազիւ կը դիմանան , և կը սպառուին կ'անհետին : Անհետանալու միտող ընտանեաց տեղն միւս կողմն կը լեցուի գաւառներէն եկող ընտանիքներով :

Աս նորեկ ընտանիք կամ անհատք ընդհանրապէս կուգան ոչ թէ դիպուածական պարագայէ մ'առաջնորդուելով , այլ ներքին իմի մղմամբ : Սոցա ներսն զօրութեան աղօտ գիտակցութիւն մի կայ որ կը հակեցունէ զիրենք դէպ իկեդրոնն , որպէս թէ բնութիւնն կը շնչէ սոցա խղճին թէ ժամ է որ երթան մեծագոյն կեդրոնի մի մէջ իմացական լուսավառութեան թարմ նիւթ լինելու : Իրենց յանդուգն բնաւորութեամբ , ձեռնարկու ոգւով , թափանցող իմացականութեամբ արդէն յաջողած են առաւել քան իրենց գիւղակիցներն կամ քաղաքակիցներն , և աւելի ընդարձակ ասպարիզի պէտքն կը զգան : Առիթ մի կը ցնցէ զիրենք , և ահա կ'երթան կեդրոնին մէջ կը հաստատուին : Իրենք կամ իրենց անմիջական սերունդն թերեւս կը յաջողին բարձրանալ ընկերութեան վերին աստիճաններն , և հինգերորդ կամ եօթներորդ սերունդն ալ եթէ չիջանիլ չսկսիլ գոնէ կը զիջանի :

Այսպէս երկրին ամէն կողմէն պարարտացուցիչ նիւթեր կուգան մայրաքաղաքին բարոյական արտն պահպանելու իւր արգասաւորութեան մէջ , Յանցելումն այսպիսի վառարաններ եղած են Մեմփիս և Թէբէ , Բաբելոն և Նինոսէ , Աթէնք և Հռովմ : Զարդիս Բարիզ , Լոնտոն , Պէրլին , Վիէննա , Կ. Պօլիս կը ծախսեն իրենց երկրաց կենսականութիւնն : Ֆռանսա կը թուի լինել այն ազգն ի քաղաքակրթ աշխարհի , որ իւր ազգային շրջափոխութեան գագաթն հասած և սահիլ սկսած է դէպ ի վար : Իւր ոյժեր վերանորոգելու համար , իւր բազմամարդութիւն պահպանելու համար , իւր Ֆրիդրիխական կազմն կադրուրելու համար սքանչելի ճիգեր կ'ընէ այժմ այդ ազնիւ ազգ , և , ըստ մեզ , քան զամենայն շահեկան երեւոյթն կը ներկայացունէ նա այն ամենուն որ ազգաց շրջափոխութիւնն մասնաւոր հոգով կ'ուսումնասիրեն : Ապագայն պիտի տեսնէ թէ Ֆռանսական ծեր ազգն պիտի յնա՞ց թէ այն ելուն շարժումն զոր սկսած է վերջերս , սկիզբն է ազգային վերածնութեան մի : Եթի Ֆռանսա վերածնի , անհուն նշանակութիւն պիտի ունենայ այդ երողութիւն ազգաց սպագային նկատմամբ :


Օսմանեան պետութեան սահմաններուն մէջ հին ազգերու բեկորներ կան , որոց մէջ Բրդաց ցեղն մեզ ծանօթ օրինակ մ'է : Բրտու լեզուն արիական ճիւղին կը վերաբերի , իսկ ցեղն հաւանականօրէն խառնուած մէ տարրեր ցեղերու : Զիարդ և իցէ , քուրդ ցեղն , թէև բազում միլեօններէ բաղկացեալ լինի , անընդունակ է ազգային կազմակերպութեան աստիճանն բարձրանալու , և դատապարտուած է թիւրք և Հայ ցեղերուն խառնուրդով աներեւոյթ լինելու : Նոքա որք « Բրդաստան » անունն կը ջանան դնել « Հայաստան » անուն տեղ , իրենց խորին տգիտութիւն կը ցուցնեն : Պատմութեան մէջ « Բրդաստան » կոչուած աշխարհ մի և պետութիւն

մի չենք գտներ: Այսօր ալ Քուրդն ազգութեան և հայ-
րենիքի գաղափարէն բոլորովին թափուր է: Հայն է որ
բոլոր սրտով յարած է Հայաստան աշխարհին, զայն կը
մշակէ և կը շինէ իրրեւ իւրն, մինչդեռ Քուրդն զայն աւե-
րելու և քայքայելու կը ծառայէ իրրեւ զթշնամոյն:

Ներկայ ցեղերու մէջէն եթէ Ֆռանսային ազգային
զարգացման գաղաթնակէտն հասած՝ և իջնելու միտող
ազգ մի կը ներկայացունէ, եթէ Քուրդն սպառնալ ցեղի
մի բեկորն կամ քաղաքակրթութեւն անընդունակ ցեղի

մի օրինակն կը ներկայացունէ, Հայն ալ այնպիսի ազգ
մէ որ բարձր քաղաքակրթութեան հասնելու ուղի թեան
մէջ մտած, բայց իգագաթնակէտն հասնելէ առաջ կասած
է: Հայաստան իւր սպառնչ կեդրոններ ունեցած չէ,
նորա զօրութիւնք քաղաքակրթութեան բարձր աստի-
ճանաց մէջ բոցավառելով սպառած չեն: Այդ է ահա
խնդրոյն սիրան, յոր պիտի մխիմք յառաջիկայի:

(Շարունակելի)



ԴՐԱՄՔ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐԱՅ ԿԻԼԻԿԻՈՅ:

Հայոց վաճառականի տրամադրութիւն մեծապէս զարգացած է Ռուսիոյ հարստութեան տեսն, Միջերկրականի վերայ նաւահանգիստ և Եւրոպայի և Եգիպտոսի հետ յարաբերութեան դիւրութիւններ ունենալով: Վաճառական զարգացման բերմամբ դրամն ևս իբր միջոց փոխանակութեան իւր դեր լիովին կատարելու կոչուած է և բազում տեսակ ոսկի, արծաթ և պղնձ դրամներ Հայ թագաւորք կտրած են: Վենետիկցի վաճառականք ալ Սոյ փողերունցին մէջ դրամ դրոշմել կուտային դրոշն բերելով ոսկին ու արծաթն, և անոր համար սակ կը վճարէին Հայոց գանձուն: Հայոց դրամներն չրջակայ երկրաց և մինչեւ Եգիպտոս:

սի մէջ ալ կ'անցնէին. Գեր. Հայր Ղեւոնդ Ալիշան, որոյ « Սիսուան » նընդարձակ տեղեկութիւն կուտայ այս մասին եւ յորմէ կարտառակենք աստ դրամոց պատկերներն, կը կարծէ թէ սահմանակից Թուրք իշխանք, Տեարք Սարուխանի, Մէնդէշի եւ Այսընի ի ԺԻ դարու, Հայ դրամոց ընտելումն հետեւած եւ ընդօրինակած են, ինչպէս նաեւ Կիպրացիին Հենրիկոս Բ. Լեւոն Ա. ունի ոսկի դրամ 7 կրամ կշռող եւ 21 Փրանք արժողութեամբ: Լեւոն Բ. ունի ոսկի դրամ 4.80 կրամ կշռող եւ 15 Փրանք արժողութեամբ: Կոստանդին Բ. ի ոսկի դրամն 3.60 կրամ կը կշռէ եւ 12 Փրանք կարծէ:

Վերի պատկերին մէջ Ո կը նշանակէ ոսկի: Ա.—արծաթ եւ Պ.—պղնձ:

ՆԱՄԱԿ Ի ԳԵՐ. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԷ:

Հ. Ղ. Ալիշանէ թոյլ տուելովն խնդրած էինք « Սիսուան » այ պատկերներէն մէկ քանին արտատպել « Հայք » ի մէջ. Նորին Գերապատուութիւն հետեւեալ նամակաւ հաճած է մեզ շնորհել այդ արտօնութիւն:

ՎԵՆԵՏԻԱ, Ս. ՂԱԶԱՐ, 30 ԴԵԿ. 1890

Ազնիւ Բանասէր Պարոն,

Ընդունեցայ զ« Հայք » դ. մինչ անոր անունը տպագրել գրեթէ արգիլեալ է մեր կողմերը, ինչպէս ձեզ ծանօթ պիտի ըլլայ, թերեւս այդ արգելման փոխանակ՝ յօտար աշխարհս հռչակուի այդ անունն այլ լաւ ևս եթէ այց առնէ Աստուած՝ ըստ ողորմութեան և իմաստութեան Իւրոյ:

Սիսուանի պատկերաց ո՛րն և հաճոյ ըլլայ ձեզ կրնաք արտատպել. Լինթադրեմ թէ ծանօթ է ձեզ և անկէ ետեւ տպագրեալ « Ոյրարատ » ն, և նոյ տպագրիլ սկսեալ « Սիսուան » ն:

Ձեր գործոց բարի յաջողութիւն կը վաղթեմ նոր տարւոյս հետ:

Հ. ՂԵՒՈՆԴ Մ. ԱԼԻՇԱՆ.

ՀԱՅՔ

Հայքի Յունվար 1 ի և 15 ի թիւերն Դեկտ. 1 ին և 15 ին հրատարակեցինք իբրեւ նմոյշ ամէն կողմ հասցունելու և ցրուելու նպատակաւ: Ներկայ թիւնոր փետր. 1 ի թուականն կը կրէ միայն քանի մ'օր կանուխ կ'երևի Այսուհետեւ Հայք կանոնաւորապէս պիտի հրատարակուի ամէն ամսոյ 1 ին և 15 ին:

Խնդակցութեան նամակներ ընդունած եմք շատ կողմերէ, սակայն չենք կրնար մեր անձուկ չջերուն մէջ հրատարակել ամէնն ալ: Ծնորհակալ եմք Լոնտոնի Տէյլի Նիւզէն, որ իւր Դեկտ. 20 ի թուով ծանուցած է մեր թերթ սա խօսքով. « Հայք (Հայեր) է տիրողոսն նոր Հայերէն Հայրենասիրական բերանի մը դուր Տօքթ. Գարրիէլեան սկսած է ի Նիւ-Եորք: » Ծնորհակալ եմք նոյնպէս մեր մեծանուն և ազնիւ բարեկամ Տիար Չերազին որ իւր երկրեզուեան թերթի մէջ գրած է հետեւեալ տողերն. « Տիար Տօքթ. Մ. Ս. Գարրիէլեան կ'իտանեայ թերթ մի. քաղաքական և գիտական, հիմնած է ի Նիւ-

Եորք: Հաճութեամբ կարդացինք առաջին թիւն, որ կը պարունակէ, իմէջ այլոց, շահեկան յօդուած մի աննդեան վերայ, ընտիր տեսութիւն մի Հայոց պատմութեան վերայ և առաջնորդող յօդուած մի որ կը ցուցնէ թէ հարկ է որ Ռուսիոյ, Եգիպտոսի Եւրոպայի, Հնդկաստանի, Ամերիկայի և Պարսկաստանի Հայ զաղթականութիւնք անուանեն պատուիրակներ՝ կազմելու կեդրոնական Յանձնախումբ մի, որոյ պաշտօնն լինի ազգային շարժումը փարելի փրկութիւն Օսմանեան Հայաստանի: « Տես Լ'Աւմէն » 1 Յունվ. 1891) —

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼԱՆԷ

Կ. Պոլիս 27 ԴԵԿտ. 1890

Իրաց վիճակը փոխուեցաւ. լաւ ևս ըսեմ՝ իրաց երեւոյթը: Բռնի խաղաղութիւն մը, կեղծ հաշտութիւն մը կարկատեցաւ Պատրիարքին և Դրան միջև: Ինչ որ ասկէ մի քանի շաբաթ առաջ անհեթեթ պիտի երևէր նախատեսել այսօր կատարուած իրողութիւն մը է — Խորէն Ալըգեան նորէն Հայոց Ամեն. Պատրիարքն է: Մաքսուտ Սիման Պէյն, Ունճեան Արիկ Էֆ. և Դատական Նախարարութեան խորհրդական Վահան Էֆ. ուսայնանկին կ'իյցին պէս Բ. Դոնէն ի Մաքրիգիւղ և Մաքրիգիւղն ի Բ. Դոնէն այնքան գնացին եկան որ վերջապէս մտցէ կամուրջ մը յօրինեցին, և այդ կամուրջին վրայէն Խորէն Ալըգեան զողողալով անցաւ նախ Պալատն երթալ եւ Սուլթանին ներկայանալու, երկու օր ետեւ ալ պատրիարքարան երթալու հանդիսաւոր կերպով: Գուցէ այնքան չսնդէր իր հրաժարականին վրայ եթէ վերջին դէպքերու տաթիւ համազուած չըլլար թէ հայերն գիտեն փառտի աեղ փայտ գործածել ի հարկին: Արդարեւ ոչ փայտէ և ոչ երկաթէ փաստերու չընդ լուեցաւ Ալըգեանի ի գալ պատրիարքական վերադադմելու օրն, յորում կառավարութիւնը գինուորներ գնելով պատրիարքին չուրջնցուցց թէ պիտի պաշտպանէ զայն յեղափոխականաց դաշոյնէն ինչպէս-ոչ յեղափոխականաց քրդմէջիւնէն:

Կառավարութեան ձեռքին մէջ պատանդ կրնան համարուիլ հինգ հարիւրէ աւելի բանտարկեալ Հայերն, որոց ամենամեծ մասն նախնական հարցաքննութեան անգամ

արժանացած չէ, որովհետեւ ասոնք բանտի մէջ պահելով պալատին միտքը մանաւանդ Հայ ազգի պատմել և սորոսականներէ քան թէ այս անհատները մասնատարակ, Ազգին գանդառեալ տրամադրութիւնն է յանցանքը, և Սուլթանը շատ նեղութիւն յանձն կ'առնու իւր Հայ հպատակներն չնորհակալութեան վարժանքները: Տակաւին այսօր ոչ մէկ տուն և ոչ մէկ տեղ ազատ է յանկարծական խուզարկութենէ: յանկարծ ճամբան, կտրքին թրամկէյին արձարանին մէջ... կը բռնեն և կը տանին... ոչ միշտ բանտը: Ասոնք կը պատահին մայրաքաղաքի մէջ, քանի գետնանայ ներկայութեանը, իսկ գաւառները... Գաւառներն ինչպէս ի մայրաքաղաքի Հայք անօրինակ նեղութիւններու մատնուած են ամիսներէ ի վեր որպէս զի յանձնառու լինին հռչակել թէ հանգիստ և գոհ են շնորհիւ Սուլթանին: Վերջերս շարունակ հաւատարմական հանրագրութիւններ պալատը կը հասնին գաւառներէն, և հեռագրով կը հասնին: Այս կարգի վերջին հեռագիրներն հասան Սերաստիամէն, Ամասիայէն, Նիքոսիայէն, Սարաջէն, Վանէն և Գարապիւն: Նոյնպէս անդորրութիւն աւետող հեռագիրներ կու գան պալատը և կը հրատարակուին թուրք լրագրաց մէջ: Արդեօք Ամերիկացոց կիմացնէ՞ք այս հեռագիրներն և անոնց ծաղրելի հանգամանքը: Ինչքան անդորրութիւն և ապահովութիւն պէտք է գտնուի Օսմանեան պետութեան մէջ եթէ հարկ կը սեպուի գաւառներէն հեռագրով օրէ օր լուր ստանալ և հրատարակել աշխարհի թէ «ս' և իցէ զէպք չէ՞» պատահած և խաղաղութիւն կը տրի:»

Խոհեմներն հոս կը կարծեն թէ Ալեքսանդր լաւ բրաւ հրաժարականն ետ առնելով, և թէ ատոր արդիւնքը պիտի ըլլայ բանտարկեցող արձակումն և հալածանաց մեղմացումն: Ինչ ճանն անխոհեմներու կարծիքը այն է թէ Խորէն այդ արդիւնքն, մինչև անգամ եթէ ստոյգ ալ լինէր, չպարտէր գնել անկարգապահ տկարութեամբ Սուլթանի հրամանաւ նորէն պատրիարքական աթոռն բազմելով: Աւելի լաւ կըլլար որ նեղութիւնք շարունակուէին մինչև որ Եւրոպա միջամտելու հարկ զգար: Պատրիարքն կրնար նոյն ատեն պատրիարքարանի բանալիներն յղել Վեհափառ Մակար Կաթողիկոսին, և անկէ խնդրել որ Տաճկաստանի բոլոր Հայ եպիսկոպոսական թեմերն իւր իրաւասութեան ներքեւ առնու և ինքն անուանէ առաջնորդներն: Այս կերպով խնդիրն ռուսի կը մեծնար և պալատն աւելի զիջումներ յանձն կ'առնոյր Ռուսական միջամտութեանց նոր ասպարէզ մը չստեղծելու համար:

Յոյներն դեռ կը յարատեւեն իրենց յանդուգն հաստատամտութեան մէջ: Մաքրոյանի Պէյն կարեւոր գերկատարել կ'աշխատի Յունական խտուրթիւնն կահուղցնելու ջանալով, բայց ի վեր: Գլխաւոր եպիսկոպոսներէն մին, սինօթի ամենէն ազդեցիկ անդամն, ի սլաւտախանի Յոյն բժշկին սպառնալեօք խառն փաղաքշանայ ըսած է անցեալ օր. «Զեր սպառնալիքէն վախոցող չեմք մեք, ըսէ Վեհափառ Տէրողդ որ եթէ կուզէ հետեւի Գրիգոր Ե. պատրիարքն կախել տուող Սուլթան Մահմուտի օրինակին: Իմ մասիս ես պատրաստ եմ առաջին կախուողն ըլլալու:» Յունաց մէջ տիրող գրգռումն

ամուլ չէ: Ալեքսանդրիոյ Յոյն գաղթականութիւնն քանի մը միլիոն ֆրանք հանգանակելու յաջողութեամբ սկսած է: Յունաց օգնելու համար ապստամբութեան կամ պատերազմի ատեն: Ալեքսանդրիոյ Յունաց օրինակին հետեւող Հայ գաղթականութիւնն մը կ'աշխարհի վրայ: Նիւ-Յորքի և Վաշինգտոնի երեւելի հայերն ինչ կ'ընեն: Կ. Պոլսոյ Հայ երեւելեաց շոգոքորթ հանրագրութիւնն պէտք է որ իր հակապատկերն ունենայ Հայ գաղթականութեանց մէջ: Աստի մայրաքաղաքիս բնակող աներկայութեա շատոնց յուսահատած ենք մեր երեւելեաց ընթացքէն:

ԱՆՆԵՐԵՒՈՅԹ ՈՄՆ

ՆՈՐ ՀՍՐԱՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆ:

ՔէՄԱՆ. — Չալեան ծերունի Նիկողոս Աղան Բաղաւճցի՝ Կիւրհան երթալով գործով Ամասուսն կը հանդիպի, որ քոսն տնուոր Քիւրհան գիւղ մէջ: Այնտեղ մէկուն հետ առնելիքի համար քիչ մը կը զարգալի: Անկէ կ'ելլէ որ Խօջիկերէ երթայ, գիւղէն հազիւ տասն վայրկեան հեռացած՝ ետեւէն կը հասնին Քիւրհան, Նիկողոս Աղան գնդակահար վար կը ձգէն ձիէն և բերանն ալ ցից մը գործելով կեանքին վերջ կուտան:

Ապանեալն իմ անձնական ծանօթս էր և ինչ հետ շատեր սղտային իր շարաշար սպաննուին:

ՎՇՏԱՀԱՐՆ:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ Ի ՓՐՕՎԻՏԷՆՍ:

Բոտ Ալլընտ Նաւանգի փրօվիտէնս քաղաքին մէջ յարաճուն Հայ գաղթականութիւնն մը ունիմք այժմ, իբր 250 ազգայիններէ բաղկացեալ, որ Ոսթրիի մայր գաղթականութենէն արձակուած մեծագոյն ճիւղն է: Փրօվիտէնս առաւել քան 200,000 բնակչօք ճարտարարուեստ կեդրոն մէջ, որոց զանազան գործարանաց մէջ կ'աշխատին մեր հայրենակիցք: Յունար 4 ի կիրակին հոն անցունելով երեկոյեան գումարման ներկայ գտնուելու հաճոյքն ունեցանք, գումարում բոլոր Հայոց բայց ի խընամս «Խրիմեան» ընկերութեան: Զանաչեցինք բնկերութեան խոհեմագորդ ատենապետն, Վիեժ. Տիար Շիշմանեան, որոյ մէկ նամակն պիտի գտնեն ընթերցողք Հայքի ներկայ թուոյն մէջ: Ծանաչեցինք մեր հայրենակցաց բարեսիրտութիւնն և ազգասիրական եռանդն ևս բացատրեալ այն ջերմընդունելութեան մէջ զոր ցուցին «Հայք» ի խմբագրին, որոյ թերթին ոչ միայն բազմաթիւ բաժանորդներ գտնուեցան այլ և հինգ նոթիւրատու հայրենակիցներ որք յանձն առին «Հայք» ի խմբանախագէ ճիւղն լինելու Փրօվիտէնսի մէջ: Մեք, ի տես իրենց անձնուէր յօժարամտութեան և առատասրտութեան՝ զգայինք, ինչպէս ուրիշ բազում առիթներով ըզգացած էինք, թէ մեր սլարզ գործաւոր գաւառն մեծ գործիւն են հայրենասէր գործիչներուն, և թէ գործիչք ևս կրնան և սլարտին քաջալերուիլ և միանգամայն տրամադիր զգալ զանձինս աւելի խորին անձնուիրութեան առ հայրենիս:

«Հայք» ի խմբախալ Յանձնախումբն ի Փրօվիտէնս կը բաղկանայ հետեւեալ հայրենակիցներէն: Մեք. Տեարք Ե. Շահինեան, Ա. Պետրոսեան, Մ. Կարապետեան և Մ. Պաղընջի, որոց կը յայտնեմք մեր շնորհակալութիւն հրատարակալ:

ՄԱՐՇ ԱՐԱՐԱՏԵԱՆ.

Ընթերցողաց շատից ծանօթ է անցեալ տարի «Արարատեան Գունդ» անուամբ մարմնավարական և զինավարժական Հայ ընկերութեան մը կազմուած լինելն ինիւ Եօրք։ Այդ ընկերութեան անձնուէր մարզիչն և ատենապետն եղող Մեծ. Տիար Գ. Գասպարեան յղած է մեզ հետեւեալ մարչն ի նուէր իւր սիրեցեալ մարզիկներուն։ Այս մարչի յատուկ եղանակն ալ յօրինած է Տ. Գասպարեան, զոր յառաջիկայ թիւերէն մէկուն մէջ հրատարակելու հաճոյքն պիտի ունենանք։

Հապ օհ, յառաջ ընթանանք քաջ մարտիկներ,
Թշնամոյն վայրագ հրոսակներ չէ՞ք տեսներ,
Որ կ'սպառնան մեր Ազգ, պատիւ և կեանք.
Պէտք չեն մեզ փայլուն զէնք, չքեղ համազգեստք
Բաւ են մեզ բա՛հ, բրիճք ու կորովի սրտեր,
Վանել գազանք, խորտակել նոցա վրանք։

Խմբակք, կա՛նկ, 'ի շա՛ր,
Լըցէք ձեր հրացան,
Առէք թշնամոյն
Ճակտին լաւ նշան։

Կրա՛կ դէ՛ս յաջ, կրա՛կ դէ՛ս ձախ,
Կրա՛կ, կրա՛կ, անդադար։

Թուրքին դէմքն խոժոռ մեզ չեն վախցուներ,
Գուրդին պեխերն խոշոր մեզ չեն սարսափեր.
Միթէ չի կրե՞մք մեր հարց արի սրտեր,
Տեսնէ՞ք, ինչպէս ցիր ցան աստ անդ անձարակք,
Հապճէ՛կ փախչին որպէս երկչոտ նապաստակք,
Օ՛հ ուրեմն, ընդոտ քայլ առէք արագ։

Խմբակք, կա՛նկ, 'ի շա՛ր,
Սաւինք 'ի կա՛ղ, գո՛յճ,
Վանէ՛ շանն հարուած,
Միտէ՛ քոյդ յանկարծ,

Ձա՛րկ դէ՛ս յաջ, զա՛րկ դէ՛ս ձախ,
Ձա՛րկ, զա՛րկ անդադար։

Պրութիւն, Դեկ. 20 1880

Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆ.

ՆԱՄԱԿ ՓՐՕՎԻՏԷՆՍԷ.

18 Յունվար 1891

«Հայք» թիւ 1 և 2 թիւերուն մէջ մեծ հաճութեամբ կարդացի Կեդրոնական Յանձնախումբ մը կազմակերպելու վրայ ձեր խմբագրականներ։ Անշուշտ շատ կէտեր կան որոնց մասին փոփոխութիւններ պիտի թելադրուին։ Ես սկզբունքն բոլորովին ուզիլ և արդար կը գտնեմ, բայց մանրամասնութեանց մէկուն նկատմամբ դիտողութիւն մը ունիմ։ — Յանձնախումբի անդամոց տարեկան թոշակ նշանակուած է ծրագրին մէջ 1000 թաւեռ կամ 5000 ֆրանք։ Այդ գումարը բնաւ չափազանց շատ չէ, և ատոր երկպառակն ալ չափազանց չի պիտի ըլլար անանկ անձանց համար որք իրենց բոլոր փորձառութիւնն, տաղանդն ու ժամանակն պիտի նուիրեն ազգին։ Բայց նկատելով գաղթականաց նիւթական տկար վիճակն, մեծատանց շատերուն առ այժմ անտարբեր դիրքն, ինծի կ'երեւի թէ աւելի աղէկ կ'ըլլայ 750 թաւեռ նշանակել փոխանակ 1000 թիւ իւր տարեկան թոշակ Յանձնախումբի իւրաքանչիւր անդամոց։

Մնամ յարգանք
Մ. Բ. ՇԻՇՄԱՆԵԱՆ.

Մեծ. Տօքթ. Մ. Ս. Գարրիէլեան,

Եւլն, Ելն, Ելն,

Ի նիւ-Եսրք

Հայրենասէր և ազնիւ բարեկամ,

Քա՛նի մեծ բերկրութիւն է ինձ շնորհաւորել զձեզ վասն «Հայք» ին և զ«Հայք» վասն բարեբաղդութեան ունենալու զձեզ իր Տէրն ու Խմբագիրը։

Հապիւ կարողացայ հաւատալ աչերիս, այնքան մեծ եղաւ բերկրանքս զոր զգացի երբ տեսայ այդ նոր Հայ պարբերականն զոր ձեր կարող գործիչ կուգայ յասպարէզ գրական նուիրել Հայ Ազգին ի պաշտպանութիւն արդար և սուրբ դատին մեր մարտիրոս ժողովրդեան։ Երբ ամեն կարող անձ գայ կատարելու իւր պարտականութիւն և ընէ ինչ որ կրնայ ընել ի նպաստ և յօգուտ ընդհանուր գործին, Այն ատեն անշուշտ կը փրկուի ազգը։

Եղբարք բանը դեռ անշուշտիւնի

Այժմուս մեր մտքին ցնորք չը կարծենք

Բանը կը մարմնանայ ու տեսանելի

Կը լինի մենք միայն վստահ թող լինենք։

Մի մեծ և զգալի պէտք լեցնել կուգայ ձեր պատուական թերթ, նոր աշխարհի Հայ գաղթականութեան տալով մի գեղեցկատեսիլ ազգային պարբերական Օրկըն որ խիստ կարող և յաջող կերպով պիտի թարգման հանդիսանայ Հայ գաղթականց և նկատելով որ այսօր Հայոց թիւը յԱմերիկայ կ'օրիկ հաշուով 50000 կը հասնի շատ լաւատես գուշակութիւն մը ըրած չհամարուիմ եթէ ըսեմ թէ քիչ ժամանակէն ամէն հայրենասէր ոք պիտի բերկրի և ուրախանայ ստանալով ամէն շաբաթ ձեր ազգօգուտ թերթն փոխանակ տասն և չինգ օրէն անգամ մը։

Թող երկինք լսեն ձայնս և ազգայինք կատարեն ըրողանքս։

Ընդունեցէք, ազնիւ — խմբագիր Հայքի, այս առթիւ զմայլանացս և յարգանացս անկեղծ հաւատարմ ինչպէս նաև ջերմեռանդ սրտէ ըղձած բարեմաղթութիւններս վասն յաջող գործունէութեան թեւակոխած նոր փառաւոր ասպարիպում։

Միննիսիոյի Դեկ. 27 2880

Մ. ՊԱՆԹԱՋԱՐ

ՀԱՅՈՑ ՀԱՄԱՐ ԱՐՈՒՍՏԱՆՈՑ.

Հետեւեալ նամակն մեզ ուղղուած է ինիւ Եօրքի Հայ գաղթականութեան երեւելի անդամներէն Մեծ. Տիար Պօլոս Յակոբեանի կողմանէ, որ իբր քսան տարիներէ ի վեր հաստատուած է աստ և ծանօթ է նորեկ Հայերու մասին իւր հոգածութեամբ։ Տիար Յակոբեան Հայկական Միութեան վերընտրեալ և արժանաւոր ատենապետն է այժմ։ Իւր յօգուած յոյժ կենսական խնդրոյ մի վրայ է և յուսամբ թէ Ամերիկայի միացեալ նահանգաց բոլոր Հայերն զայն լուրջ ուշադրութեան նիւթ կ'ընեն։

... Խմբագիր «Հայք» թիւ.

Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ Հայերու թիւն տարուէ տարի կ'աւելնայ և կերեւի թէ քիչ տարիներէ վերջ ստուար գաղթականութիւն մը պիտի ըլլայ։ Անոնք մանաւանդ որ այս երկրին մէջ շատոնց հաստատուած ըլլալով փորձառու են, պէտք է որ լրջօրէն քննեն սա մեծ խնդրին թէ ինչպէս կարելի է Հայոց նիւթական և բարոյական ապագայ զարգացումն հիմնականէ կարելի եղածին չափ ապահովցնել։ Հայրենեաց տառապանքներուն վրայ խօսիլ աղէկ է, բայց ատոր համար պէտք չէ որ մոռնանք մեր աչքին առջեւ տառապող հայրենակիցներու վիճակը որ դարման կը պահանջէ։ Շատեր կան անգործ. և անոնք ալ որ գործ ունին, հա-

զիւ. թէ իրենց գործ գործ կրնայ սեպուիլ: Ուստի իր, Փրովիտէնսի, Նիւ Եօքի Հայերուն մեծ մասը այն կարգի գործաւորներ են որոնք իրենց բազմաթիւութեան կենդանական ոյժը կը շահագործեն մանաւանդ քան թէ իրենց ուղեղներուն իմացական կարողութիւններն: Ստիպուած են չարաթը վեցէն մինչեւ ութ թաւերով գոհ ըլլալ և շատ հակառողջապահական խնայողութիւններ ընել:

Խնդիրը սա է թէ չենք կրնար անանկ ճար մը դտնել որ ասոնք վեցի տեղ տասը և ութի տեղ տասնուհինգ թաւեր և աւելի չարաթական առնելու կարող ըլլան: Չենք կրնար միջոց մի ձեռք առնել որով կարող ըլլանք ասոնց գոնէ մէկ մասին արհեստներ սովորելուն դիւրութիւն մ'ընծայել: Չենք կրնար Նիւ Եօքի մէջ անանկ արհեստանոց մը հաստատել ուր այս երկրին մէջ շատ բանող արուեստներուն մի քանին սովորին Հայերն, և բարձրագոյն կարգի գործաւորներ դառնան, աւելի թոշակ և աւելի յարգ ունենան:

Այս նպատակը իգործ դնելու համար դրամ պէտք է: Արդեօք դրամը չենք կրնար հայթայթել: Եթէ երեք կամ չորս հազար Հայ կայ այս երկրին մէջ, միթէ չե՞ն յօժարիր ամէն մէկը ասորին մէկ թաւեր տալ այս գործին համար: Եթէ երեք կամ չորս տարի միայն վճարեն այսպիսի ազգային տուրք մը, և ապահով պանդաներու մէջ շահու դրուի, շատ չանցած արուեստանոց մը հաստատելու համար հարկաւոր եղած գումարը կ'ունենանք:

Այս խնդիրը մեր Գաղթականաց ուղադրութեանը յանձնելով մնամ յարգանքով:

13 Յունվար, 1891, Նիւ Եօք

Պ. ՅԱԿՈԲԵԱՆ

ԳՈՂՈՒԱԾ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԹԵՐԹԵՐԻ:

Առաջինի Յունվար 11 թուոյն մէջ Տիար Ռափայէլ Պատկանեանի (Բամառ Բաթիպա) մէկ նոր բանաստեղծութիւնն կը գտնենք, նոյն իսկ լ'Առաջինին մէջ հրատարակուելու համար հեղինակուած...

ՀԱՌԱՋԱՆՔ

Միթէ անհրաժեշտ էր Եւրոպային կատարել համեստ կարիքը Հային-Նորան գործատի վիճակէն հանել, Աստուծոյ պատկեր մարդոց կարգ դնել:

Ասացէ՛ք, միթէ Հայը չէ՛ ազատ Մըշակել հարանց հողը հարազատ, Ուր ամբողջութեամբ են (այդ խօսքէ՛ գաղտնիք) Նորա նախնեացը սուրբ սակերոտիք:

Միթէ իրաւունք չունի խեղճ Հայ կին Արգանդէն ծնած ծովերի դաւակին Հայի բառերով «նանի» երգելու Ու նիրհ անուշիկ աչքին բերելու:

Եւ միթէ միայն Հային չէ՛ տըւած Ունենալ հաւատ, ճանաչել Աստուած, Դողդոջուն ձեռքը երկինք կարկառել, Հայի բառերով իւր պէտքը խնդրել:

Միթէ տուած չէ՛ Հային իրաւունք Ունենալի ընիկ, ունենալ աղջկունք, Եւ ի սէր նոցա վարուց մաքրութեան Մերկացնել սուրբ ու կանգնիլ պաշտպան:

Ասացէ՛ք, երկրիս վերայ օրէնք կա՞յ Որ հարկւր հայ մարդ չ'ընդունուին վրկայ, Իսկ մէկ հատ տաճկի խօսքին ապաստան Շարժաթը կտրէ կեղծի դատաստան:

Այսպէս ասելը չէ՞ օրինաւոր:

«Թող Հայը լինի Հայիս դատաւոր, Թող ինձ հայ բառով օրէնք բացատրեն» Թէ մեղաւոր եմ, վրդաւ թող կտրեն:

Միթէ կը լինի մեծ յանդգնութիւն կամ պատժի արժան ապրտամբութիւն, Թէ ասեմ. «Հացըս անուշ ձեզ, կերէ՛ք, Արտըս մի՛ քանդէք, այգիս մի՛ է՛րէք»:

Քու մէջ, Եւրոպա մարդիկ են ասում Աւել իրաւունք ունի անասուն Քան թէ հայ ազգը, թշուառ, հալածուած... Ասա՛, Եւրոպա, ունի՞ս դու Աստուած: (Լ.Արմէնի) Գ.Ա.Մ.Ա.Ռ. Բ.Ա.Թ.Պ.Ա.

Փիսմէյըրը (խաղաղատար) ամսաթերթն, որ բերան է «Միութիւն Տիեզերական Խաղաղութեան» կոչուած ընկերակցութեան, «Հոյսաստան և Խաղաղութիւն» խորագրով յօդուածի մը մէջ հետեւեալ տողերն կը գրէ Տիար Չերազի թերթին նկատմամբ. «Ինչպէ՞ս գլխաւոր յուզիչքն, կ'ըսէ, են նոյն ինքն Հոյերն իրենց արի մամլոյն միջոցաւ, ի գլուխ որոյ, որպէս կրնայ ըսել ոք առանց յայտուեն դատած լինելու, կը գտնուի Լոնտօնեան Արմէնիան կիսամեայ (28 Bedford Place, Russell Square, London, W.C. Նշանաւոր գրիչ մ'է որ անոր սիւնակներն կը ընու, գրիչ՝ ճարտարութեամբն աննման և չափաւորութեամբն եզակի, թերեւ վերջին աստիճան ճարտար իւր չափաւորութեամբն իսկ. այն է գրիչն Տիար Մինաս Չերազի, նախկին պատուիրակի ի Պեռլինեան վեհաժողովին: Քաջարթուն աչօք կը գիտէ նա բովանդակ աշխարհն և ամէն պատեհ առթէ օգուտ կը քողէ իւր ժողովրդեան պահանջներուն վերայ ուղադրութիւն հրաւիրելու» (Տես Դեկտ. ի թիւն):

Նայնթլինթ Սէնչիւրի (ԺԹ. Դար) Հանդէսն նշանաւոր յօդուած մ'ունի իւր Դեկտ. ի թուոյն մէջ, յո՛ւմէ կը քողեմք հետեւեալ մասերն. — Սուլթան Համիտ կարի հիւրասէր և քաղաքավար է դէպ յօտարազգիս, և յաճախ ի ճաշ կ'ընդունի տիկիներ:

Պարզ է և առանց ցուցամոլութեան իւր անձնական սովորութիւց մէջ, կրօնական մոլեռանդութիւն չցուցներ, և Արեւմտեան Եւրոպայի համարումն վայելելու մեծ հոգ ունի: Առ հասարակ նմա կ'ընծայուի սակայն մին այն ժանրազոյն թերութեանց զոր կրնայ բացարձակ վեհապետ մ'ունենալ, այն է՝ ոչ ումեք վստահիլ, կասկածոտ լինել և իւր կասկած ցուցնել այն ամենուն նկատմամբ որք մօտ կուգան նմա թէ նախարարք, թէ պալատականք, թէ տէրութեանց ներկայացուցիչք: Եթէ, կ'ըսեն, եր-

Դուք, որոնք ապագայի թեմայի խորհուրդ տան նմա, կը սկսի կատարել թէ գուցէ դաւ մի կը լաւեն, և թէ իւր նախարարաց երջութիւն տեսակցութիւն մ'ունենան, բացառութիւն կը պահանջէ. մինչև անգամ ամուսնութեան պէս առիթներով թրքաց մեծ գումարումներուն հակառակ կը կենայ. իւր վարչութեան ուրիշ գլխաւոր մէկ թերութիւնն, վերոյիշեալին հետեանքն, այն է զի ինքն անձամբ կուզէ ընել ամէն բան, և չկամիր իւր նախարարաց ու և է մէկուն հաւատալ պատասխանատուութիւն և զօրութիւն. կառավարութեան վերաբերեալ մանրամասնութիւն մի չկայ այնպէս փոքր կամ անկարելորդ որ իւր անձնական հաւանութեան և ստորագրութեան չենթարկուի. Բրիտանական դեսպանն, օրինակի համար, չկրնար իւր շոգեմակոյկն իւր ծախիւք նորոգել տալ թրքական նաւարանին մէջ առանց խնդիրն Սուլթանին ներկայացուելու. Սուլթանն, ուրիշ դեսպանի մը հետ տեսակցութեան մի միջոցին գանգատ յայտնած է թէ չափազանց կ'աշխատի, և ցուցած է սեղանին վերայ դիրքաւած թղթերու կոյտն որոց մասին իւր որոշում ինքրուած էր. Դեսպանն ակնարկ մը նետելով թղթերու դէպքին դիտած է թէ անոնց առաջինն կը վերաբերէր Բերսայի մէջ սրճարանի մի նկատմամբ առաջարկուած կանոններու. նախարարի դիրքն պարզ քարտուղարի դիրք մ'է առանց զօրութեան և առանց պատասխանատուութեան, և նախարարք դիտակից լինելով թէ իրենց վերայ վստահութիւն չէ դրուած խոյս կուտան դժուարութիւններէ. Սուլթանն ու չադիր է ամէն հրատարակութեան որ իւր անձին վերաբերութեամբ Եւրոպայի ու և իցէ մասին մէջ կ'երևի. մասնաւոր պաշտօնային մի կ'որոշ յատուկ պաշտօնն է հաւաքել այդ ամէնն և մատուցանել վեհապետին. իւր եկամուտն ահագին է. թող կէս միլիոն անգլիական ոսկին զոր կ'առնու պետական հարկերէն, անոր երկու կամ երեք անգամն ալ կ'ընդունի գահուն ստացուածքէն. վերջերս նորա գոյքն աւելի ընդարձակուած են. Պաղատարի դաւառին առաւել քան կէսն, և յորդանանու հովտին ամբողջըն անցած են նորա ձեռքն. Ասոր մէկ արդիւնքն այն է որ տէրութեան գանձն նուազուորք կը մտնէ, վասն զի Սուլթանին հողերն և զայնս մշակողք ազատ են հարկէ:

« ՀԱՅՔ » ԱՌ « Արմէնիա »

1890 Մարտ 12 ին, յանուն Պ. Յ. Գրիգորեանի 45 թաւեռի մի մանտափոսթ յղեցի առ Տիար Փորթուգալեան, նամակիս մէջ բացատրելով թէ Գրիգորեան կը զրկէր այդ գումար Պ. Յ. Աշտեանի, որ պիտի Պօլսէն գար յԱմերիկայ Մարտիկի ճամբով, և թէ եթէ յիշեալն չի գալու լինէր, գումարն ետ պիտի զրկուէր դարձեալ հոս. երկու ամիս և չորս օր յետոյ (Յունիս 16ին) Գրիգորեան եկաւ ինձ ըսաւ թէ Աշտեանէն նամակ առած է թէ չպիտի գայ Ամերիկա, և ուստի այն գումարն ետ զրկուելու է. Յունիս 16ին առաջին անգամ լինելով զայս գրեցի Տ. Փորթուգալեանի. Պատասխան չընդունելով նորէն և նորէն գրեցի, չորս կամ հինգ անգամ, այսինքն ամէն անգամ որ Գրիգորեան կուգար պատասխան մը առնելու ինչ, Բայց ուր իցէ պատասխան չափի. Դեկտեմբրին, այսինքն աւելի քան հինգ ամիս յետոյ, Գր. վերադարձն եկաւ ինձ, այս անգամ նամակաւ մի Մարտիկի Աշտեանի կողմէն գրուած, յորում կ'ըսէր թէ Տ. Փ. մերժած է վճարել դրամն. Սակայն դարձեալ պատասխան չկայ ինձի Տ. Փ. է:

Ընկալայ Ամէնիա Յունիս 7, 1891ին թիւն, և ահա զարմանօք տեսայ որ Տիար Փորթուգալեան, որ Յունիս 16ին նամակիս երկու տողով առանձին պատասխան տալու կամք կամ ժամանակ ունեցած չէր, իր բոլոր ամիսներ, վերջապէս կը պատասխանէ, հրապարակաւ կը պատասխանէ, և երկարօրէն կը պատասխանէ, Արմէնիա երկու է-

Ջերմ լեցունեւում:

Մենք ալ ստիպուած եմք հրապարակաւ պատասխանելու իրեն և ըսելու թէ այս խնդրոյն մէջ ինձի զարմանք և Գրիգորեանի մօտաւոր ծանօթներուն դայթակցութիւնն պատճառով իրողութիւնն առ է որ Պոլս, Տիար Փորթուգալեան, Յունիս 16 ամսաթիւ նամակիս, որով յանուն Գրիգորեանի ետ կը խնդրէր ձեռն ինչ որ յանուն նորին ձեռք յղած էր, չպատասխանեցիր. Հինգ Ամիսներ պահեցիր մանաւ փոսթն և կատարեալ լուծութեամբ, մինչև որ Աշտեան, դիտաւորութիւնն փոխելով, եկաւ Մարտիկա, և դուք ապաշով Համարելով նմա վճարել այն գումարն զոր այնքան ամիսներ պահած էր ձեր մօտ. նորէն արժան չհամարեցաք երկտողով մի ծանուցանել ինձ զայս, որպէս զի ես ալ Գրիգորեանի կարենայի բացատրութիւն տալ. Եթէ անհաճոյ էր ձեզ կատարել յանձնարարութիւնս, կամ եթէ ժամանակ չունէիք, աւելի լաւ չէ՞ր լինէր որ սկիզբէն ետ զրկէիք մանաւ փոսթն. երբ յանձնարարութիւն մի յանձն էր նուր, կամայ կամ ակամայ, խրատ կուտամ ձեզ որ կատարէք զայն, եթէ չէք ուզեր որ միտքեր զայն ակնդին. Ձեզ չեմ գովեր նաեւ որ այս առանձին խնդրին հրապարակ հանեցիր, և «Հայք» ժողովրդեան հակակրօն ընելու իր փշոց գործածեցիր. Հարուած եղի «Հայաստան», «Հնչակ» և գործիչներ, կը հարուածէք «Հայք»ը. Ձեմ կարծեր թէ ժողովուրդը պիտի հաւնի ձեր քրածին:

Տակաւին ինձի բացատրած չէք այն կէտը թէ ինչո՞ւ Աշտեանի անակնկալ ժամանումն առաջ Մանտափոսթին իր հինգ ամիս ժամանակ պահեցիր. հակառակ իմ այնքան անգամ խնդրելուն որ զայն վերադարձնելով զիս ու Գրիգորեան ազատէք անհանգստութենէ. Կեդր. Յանձ. կազմելու առաջարկիս համար այդքան և այդպիսի բարկութիւն:

Ս. Փրկիշ Եկեղեցի ԳՈՒՍԹԸՐ.

Ուսթր 19 Յունիս 1891

Երկի կատարուեցաւ Միացեալ Նահանգաց մէջ առաջին Հայ Եկեղեցին եղող Ս. Փրկիշ Եկեղեցւոյն Օծման հանգէսն, որ առաւօտեան ժամ ութին սկսելով տեւեց հինգ ժամ ու կէս. Գեր. Հ. Սարաճեան ի քարոզին պատմեց Եկեղեցւոյն շինութեան պատմութիւնն, և 1000 թաւերի հանգանակութիւն մ'ընելու առաջարկութիւնն ներկայացուց, որում պատասխանեց ժողովուրդն 500 թաւ տոթագրելով. Պոսթօնցի ազգայինք չեղ Վարագոյր մը նուիրեցին, Նկարիչ Էքսէրճեան Ս. Կուսին պատկերն Մանուկի գրկին, Տ. Սաշիկ Գրիգորեան արծաթ կանթեղ մը, Տ. Ս. Քրուտեան՝ ժամացոյց մը, Փառնթին փողօցրնակեալ ազգայինք, Եկեղեցւոյն ամբողջներն. Պոսթօնէն, Նիւ Եօքէն և ալ տեղերէ ոչ սակաւք եկած էին հանդիսին. ՀԱՆԴԻՍՍՏԵՍ ՈՄՆ

— «Հայք» ի խմբագիրն հրաւիրեալ է բանաստեղծ Յունիս 31 ի երեկոյին, Ե. Ք. Ը. Փառնասկան բաժնին մէջ (ի 128 և 23 ըր փողոց) նիւթ ունենալով «Բարոյական և Առողջութիւն» Փառնասկան հասկցող Հայ Հայրենակիցք ևս ջերմապէս կը հրաւիրուին:

LANTELM'S

Hotel and Restaurant,

10 UNION SQUARE,

New York City.

16 ըր և 17 ըր փողոցաց միջև, արեւելեան կողմն:

Նախաճաշ 40 և ճաշ 75 սենթ. խոհարարութիւն գաղիական:

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

331 7th Avenue,

NEW YORK

Դէղորէք եւ քիմիական նիւթք.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով.

H. Eguinian,

BOOK AND JOB PRINTER.

100 Centre St.,

New York City.